



Եղիշ Բարյան ունկնդի



5

3031

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐՎԵՍԻ ՊԵՏԱԿԱՆ
ԹԱՆԳԱՐԱԿԱՆ
ՆԿԱՐԻՁՆԵՐԻ ՏՈՒՆ



ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՆԿԱՐԻՁ
ՅԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
<ԵՏՄԱԿԱՆ ՅՈՒԹԱՀԱՆԴԵՍԻ
ԿԱՍԱԼՈԳ

1870 ~ 1936

ՅԵՐԵՎԱՆ ★ 1 9 3 8

30/
IX 38ր.
Տիգրան

Շապիկի վրա նկարիչի ինմանկարը
Տիտուլից առաջ ՅԵ. Թագեվորյանի պատրեհ
զործ նկարի Պ. Ա. Շիլին զովուկու

Կատալոգ կազմեց Կերպարվեսի Պետ. Թանգարանի գիտ. աշխատավոր ՅԵ. Խաչատրյան և
Ներածական հոդվածը՝ Ռ. Դրամբյանի կողմէ Ա. Պահապահ Ա. Շահինյան:

Տեխնիկական խմբագիր Զ. Մարուխյան
Մրագրիչներ Մ. Հանճարյան, Վ. Յեսայան
Հանձնված է արտգրության 22/IX 1988 թ.
Սուրարդյան է սպեկուլ 28/IX 1988 թ.
Գլավիսի լիազոր 6660 Պատ. 469, Տիրամ 300
Պետական արքական համար 31796-68

ՅԵ. Մ. ԹԱԳԵՎՈՐՅԱՆ

Յեղիչե Թագեվորյանը հանդիսանում է ականավոր, կոլորիտի բացառիկ նուրբ զգացմունքի տեր նկարիչ և մեծ կուլտուրա ունեցող գեղարվեստագետ: Նա բնության անվերջ ու չքնաղ բազմազանությունը և նրանում յեղած ամեն առավելապես պայծառն ու տոնականը հաղորդել կարողացող պեյզաժիստ է, վորը՝ իրենց չափերով գրեթե մանրանկար իր պեյզաժներից՝ բնության ուրախ, ցնծալից ներբողն և ստեղծել Յեղիչե Թագեվորյանն, իրրե այդպիսին, կանգնեց մեր առջև սրանից մի քանի տարի առաջ բաց արած իր ետյուղային գործերի ցուցահանդեսում: Արդեն իսկ այդ գործերը Թագեվորյանին իրավունք եյին տալիս առաջին տեղերից մեկը գրավելու մեր արվեստի մեջ. իսկ յեթե զրանք հայտնի լինելին հայտառնի սահմաններից դուրս, ապա Թագեվորյանը, իրրե պեյզաժիստ, մի շարքում կղասվեր այնպիսի անունների հետ, ինչպես Լեվիտանը, Կորովինը և ուրիշները: Բայց մեր արվեստում Թագեվորյանի ունեցած նշանակությունը միմիայն պեյզաժի բնագավառով չի սահմանափակվում. ներկա հետմահվան ցուցահանդեսը



Հնարավորություն ե տալիս ծանոթանալու նրա բազմակողմանի արվեստի բոլոր կողմերին:

Յեթե Թագեկոսյանի պեյզաժային գործերը ներկայումն ել, նրա գեղարվեստական ամբողջ ժառանգությանը ծանոթանալուց հետո, արվեստագետի բարձրագույն նվաճումն են, առաջին տեղը բոնելով նաև քանակական տեսակետից, ապա նրա գեղարվեստական գործունեյության մյուս կողմերը ևս արժանի յեն ուշադրության: Մենք կարծում ենք, վոր Թագեկոսյանին հասկանաւ, իսկ զրանով հենց նրան գնահատել անհնարին ե՝ առանց նրա թեև փոքրաթիվ, բայց բովանդակությամբ չափազաց բազմազան նկարներին և եսթիզներին ծանոթանալու: Այդ վերջինների մեջ ամենից առաջ հանդես ե գալիս նրա արվեստի ստեղծագործական բնույթը՝ վոչ թե բնությունից կախման մեջ գտնվելը, այլ աղատորեն կենսագործելու և գեղարվեստական կերպարներ ստեղծելու ընդունակությունը: Վերջապես, մեզ մոտ սակավ կարելի յե հանդիպել մի արվեստագետի, վորի ստեղծագործության գիտապարհնեն ունենար այն լայնությունը, այն բացառիկ բազմակողմանի բությունը, ինչպիսին մենք Թագեկոսյանի մոտ ենք տեսնում: Սակայն դժբախտաբար մենք մինչև այժմ ամբողջական պատկերացում չենք ունեցել նրա մասին:

Թագեկոսյանը բնավ չի ունեցել կատարման պատրաստի, առաջուց մշակված յեղանակներ. նկարների նրա մեկնարանումը միշտ ել համապատասխան և յեղել բովանդակությանը: Ահա թե ինչու այնքան այլազան են, այնպես իրար նման չեն արվեստագետի նկարները: Իր մտահղացումներն ինչպես հարկն ե

մարմնավորելու համար նա ոգտվում ե վոչ միայն նկարչական կատարման բոլոր հայտնի միջոցներից, այլ նույնիսկ յերբեմն փորձարկում, եքսպերիմենտներ ել և անում, նոր նյութեր կիրառելով, որինակ՝ գունավորած գիպս, բնական քարերից մողախկա: Նույն այդ նպատակով նրա նկարներն ունեն ամենաբազմազան չափեր, սկսած ամենափոքրերից մինչև մեծ գեկորատիվ պանոն: Նա ունի նաև քանդակագործական աշխատանքներ քարից, գիպսից, կերամիկայից, փայտից և փղոսկրից: Կատարման յեղանակների բազմազանությունը բնավ չի խոսում, ի հարկե, այն մասին, վոր Թագեկոսյանի գործերը զիմազուրկ են. ընդհակառակը, նրացնում միշտ ել մեծ ու յուրահատուկ անհստականության կնիք և տեսնվում:

Վերջապես, մի մոմենտ ել չափազանց եյական և Թագեկոսյանի բնութագրման համար. այդ այն ե, վոր նա ամուր թելերով կապված եր իր յերկրի, իր ժողովը զի հետ, վորի անմիջական կյանքից և վորի ստեղծագործության ամենահարուստ գանձարանից նա բազմազան թեմաներ եր քաղում իր նկարների համար: Ժամանակակից և պատմական ժանր, լեգենդներ, պատմություններ, հեքիաթներ, խաղիկներ և նույնիսկ անեկոտներ՝ նյութ եյին տալիս նրա լայն, բազմակողմանի բնությանը: Դրա հետ մեկտեղ նա նկարում ե պորտրեներ, նատյուր-մորտեր, զբաղվում ե որնամենտիկայով, գեկորատիվ գործերով, չխոսելով արդեն պեյզաժների մասին, վորոնք քանակապես գերազանցում են մյուս բոլոր գործերին՝ միասին վերցրած: Վորպիսի ապշեցուցիչ համապարփակություն, վոր մանավանդ նկատելի յե մի բնագավառում նեղ կերպով մասնա-

գիտանալու այն փոնի վրա, վոր տիրում եր նախահեղափոխական արվեստի մեջ:

Կանդնած լինելով ոռւսական և արեվմտայիշվրոպական ժամանակակից գեղարվեստական կուլտուրաների լավագույն նվաճումների մակարդակի վրա, Թաղեգոյանն իր առողջ ըմբռնումով մերժեց այն բոլոր անկումային, անառողջ, փորմալիստական թեքումները, վորոնք նախապատերազմական տարիներին տիրում եյին յեվրոպական բուրժուական արվեստի մեջ և մինչեվ այժմ ել ծաղկած են այստեղ:

Յեթե գրանում Թաղեկոսյանի արվեստն ազատ ե վորև աղղեցությունից, դրա փոխարեն շատ բանում տուժել և շնորհիվ այն պայմանների, վորոնց մեջ անցել և նրա գեղարվեստական գործունեյության նշանակալի մասը: Տաղանդավոր նկարիչը լավագույն, հասուն տարիներին հարկադրված եր իր ժամանակի խոշոր մասը վատնել այն բանի վրա, ինչ կարող եր բաժին ընկնել ամենասովորական գեղարվեստագետի—նկարչության դասեր տալ միջնակարգ դպրոցներում, իսկ նրա գործերը չեյին գնվում: Յերկար տարիներ ապրելով և աշխատելով հայկական մինչհեղափոխական միջավայրում, Թաղեկոսյանին չհասկացան և չգնահատեցին հայկական բուրժուազիան և նրա ինտելիգենցիան: Զարմանալի՞ յե արդյոք, վոր իբրև հակակշիռ այն ձիշտ և առողջ գծի, վոր հենց սկզբից դրված եր Թաղեգոյանի մեջ, նրա արվեստն սկսում և հեռանալ կյանքից դեպի վերացականը, վոչուեալը, հեռանում և յերազների և տեսիների աշխարհը: Կատարվում ե այն, ինչը սովորաբար լինում ե գեղարվեստագետի և հասարակության միջել տեղի ունեցող պառակտում

հետեվանքով: «Արվեստն արվեստի համար»—դառնում և Թաղեկոսյանի գործունեյության լոգունքը: Գեղարվեստագետը ջանում և լուծել փիլիսոփայական-վերացական բնույթի խնդիրներ, վորոնց կատարման համար միայն գեղարվեստագետի հատկությունները բավական չեյին: Բարեբախտաբար այդ տենգենցները լիովին չգերակշռեցին և բոլորովին չարտամղեցին գեղարվեստագետի առողջ գիրքավորումները ունալ կյանքի վերաբերյալ, թեև գրանք նկատելի տեղ գրավեցին նրա արվեստի մեջ:

Նրա կյանքի միայն վերջին տարիներում, արդեն մեր խորհրդային շրջանում, նրա մեջ նկատվեց հեռացում այդ գծից և ձգտում գեղի վերակառուցումը: Անժամանակ մահը հսարավորություն չտվեց Յե. Մ. Թաղեկոսյանին զարգացնելու իր գործունեյությունն այդ ուղղությամբ:

Վաղարշապատցի ջրաղացպանի վորդի Յեղիշ Թաղեկոսյանը ծնվել է 1870 թվականին, գյուղական մի համեստ ընտանիքում: Նրա մանկության առաջին տարիներն անցել են Վաղարշապատում: Նրա հոր ընտանիքը բազմանդամ եր, բայց յերեխաների մեծ մասը մանուկ հասակում եր վախճանվել: Մնացել եյին չորսը՝ Յեղիշին և իր յերեք քույրը: Յերեխայի մեջ հենց այդ տարիներին հետաքրքրություն նշարվեց դեպի գեղարվեստը: Նրա հիշողության մեջ մնացել եր այն ուժեղ տպավորությունը, վոր նրա վրա գործել եր Կորրեջիոյի նկարից արված գրավյուրը, վոր նա առաջին անգամն եր տեսնում, ինչպես նայել իր ազգականներից մեկի մի մատիտանկարը: Գեղարվեստագետի հայրն ինքը լավ փայտաքանդակորդ եր, իսկ ավագ քույրը

հիանալի ձեռագործ անել գիտեր: Յեղիշեն նկարել սկսեց 7—8 տարեկան հասակից. նկարում եր ածուխով, գաճած սպիտակ պատերի վրա: Յերբ յերեխայի 9 տարին լրացավ, նա հորյեղբոր միջոցներով ուղարկվեց Թբիլիսի, վորտեղ ընդունվեց Տեր-Հակոբյանի պահպանը: Յերկու տարի անց, 1881 թվականին, նրան ուղարկում են Մոսկվա՝ Լազարյան ճեմարանը: Այս տեղ բավական պայծառ դրսեփորվում են նրա նկարչական հակումները: Նկարչության ուսուցիչ Տիտովը նրան քաջալերում ե այդ ուղղությամբ: Դրա փոխարեն ուրիշ դասերով նա քիչ ե զրադվում: Լազարյան ճեմարանում Թագեվորյանը մնաց ընդամենը չորս տարի՝ մինչեվ 1885 թվականը: Նկարչության նրա ձիրքը բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին, վորն այն ժամանակ դաստիարակ եր Լազարյան ճեմարանում, դրդեց խորհուրդ տալու, վոր Թագեվորյանին տեղավորեն նկարչության, քանդակագործության և ճարտարապետության դպրոցում: Թագեվորյանը տաս տարի սովորեց այդ դպրոցում և ավարտեց 1894/95 թվականին: Դպրոցը, նկարչի ասելով, նրան միայն գեղարվեստական գրագիտություն տվեց: Դաստուներից ամենից ավելի հիշելի մնաց Նելլի Վելլը: Թագեվորյանի իբրեւ նկարչի դարձացումը տեղի ունեցավ ավելի ուշ, և այստեղ մեծ դեր խաղաց Վ. Դ. Պոլենովի ագդեցությունը: «Յերբ 1885 թ. յես առաջին անգամ յեղա Տրետյակովյան գալերեայում, մյուսներից ավելի Պոլենովի բաժինն ինձ ապշեցրեց: Ինձ համար, իբրեւ սկսնակի, տեխնիկայի ու կոլորիտի հարցերը կենսական պահանջներ եյին: Յես ջերմ ցանկություն ունեցա հատկապես նրանից սովորելու».—դրում ե Թա-

գեվոսյանն իր հիշողությունների մեջ Վ. Դ. Պոլենովի մասին: Բայց յերիտասարդ նկարչին դպրոցում յեղած ժամանակ գրեթե չվիճակվեց սովորել Պոլենովից: Պոլենովի աղղեցությունը վերաբերում ե արգելն դպրոցն ավարտելուն հաջորդած առաջին տարիներին: Ավելի ուշ, չնայած նրանց տարրիքների մեծ տարբերությանը, այդ հարաբերությունները վերածվեցին փոխադարձ բարեկամության, վոր պահպանվեց ամբողջ կյանքում:

Թագեվորյանի, նկարչական դպրոցում յեղած ժամանակի նկարներից պահպանվել են բնորդուհիների (նաւրապահ) հայուղները և Ղրիմի պեյզաժների սերիան: Իր ավելի ուշ կատարած եայուղային գործերի համեմատությամբ զրանք միքիչ չոր են: Բայց մի ետյուդ, պեյզաժ «Բոզորողսկում», վոր նույն տարիներին ե վերաբերում, աչքի յե ընկնում իր արտակարգ վարպետությամբ և ավարտվածությամբ: Նույն տարիներին վերաբերող մի ուրիշ, ել ավելի ապշեցուցիչ գործ և Ռ. Մ. Սուրենյանի պորտրետն, կատարված նկարչական այնպիսի նուրբ աղնվությամբ, վորից արգելն գորշակվում ե ապագայի ականավոր կոլորիտը:

1895 թվականին, դպրոցն ավարտելուց հետո, Թագեվորյանը վորոշ ժամանակով վերադառնում ե ծննդավայրը՝ Վաղարշապատ: Այստեղ նա միտք ե հղանում տալու իր առաջին յերկու ժանրային նկարը՝ «Կեսորյա ճաշը» և «Արեգելյան նոկտյուրնը», վորոնց թեմաները գեղարվեստագետը վերցրել եր ծննդավայրում արած անմիջական գիտություններից: Առաջին նկարի վրա սկսած աշխատանքը չեր հաջողվում: Յերիտասարդ նկարիչը մարդ չուներ, վոր հետը խորհրդակցեր աշխատանքի պրոցեսում ծագող մի ամբողջ

շարք հարցերի շուրջը: Այդ ամենը Թաղեկոսյանին դրդեց նորից Մոսկվա վերադառնալ:

Մոսկվայում անցկացրած հինգ տարին, 1896—1900, շատ արդյունավոր յեղան նրա համար, և այսուհետեւ Թաղեկոսյանին այլև յերեք չհաջողվեց ապրել այդպիսի լիակատար, բացառապես գեղարվեստին նվիրված կյանքով: Թեպետ նրա նյութական դրությունն այդ ժամանակ այնքան ել լավ չեր (ապրուստը հոգացվում եր գլխավորապես պատահական վաստակներով), բայց այդ ամենը հատուցում եր գտնում աշխատանքով: Յերիտասարդ նկարիչը, բացի վ. Դ. Պոլենովից, ծանոթություն և հաստատում արդեն անվանի մի շարք յերիտասարդ գեղարվեստագետների հետ՝ Լեվիտանի, Վ. Ռուբելի, Կորովինի, Բորիսով-Մուսատովի, Գոլովինի, Դոսեկինի: Բայց Թաղեկոսյանն այդ տարիներին առանձնապես մոտեցավ Յն. Դ. Պոլենովային: Վերջինս զգալիորեն ավելի տարիքով լինելով նրանից, մեծ ազգեցություն ուներ նկարչի վրա, այն ել վոչ թե միայն գեղարվեստի հարցերում, այլ նաև աշխարհանայցողություն: Թաղեկոսյանի գրած հիշողությունները Պոլենովայի մասին և նրանց նամակագրությունը հարուստ նյութ են Թաղեկոսյանին ուսումնասիրողի համար:

Իբրև Պոլենովայի գեղարվեստական անմիջական ազգեցություններից մեկը, Թաղեկոսյանը նշում և նրա պատվաստած հետաքրքրությունը դեպի որնամենտիկան: Ընդորում, նկարչի ասելով, իր գծագրերում, առանց վորևե դիտավորության, միշտ ել հայկական որնամենտներ եյին ստացվում: 1898 թ. «Արվեստասեկների ընկերության» կոնկուրսին Թաղեկոսյանի

ներկայացրած հիշյալ նկարները՝ «Կեսորյա ճաշ» և «Արևելյան նոկտյուրն»՝ մրցանակների արժանացան: Մեկ գեղարվեստագետի միաժամանակ յերկու մրցանակ տալը մեծ հաջողություն եր յերիտասարդ նկարչի համար, իսկ այդ մրցանակաբաշխման շուրջը ժյուրիի մեծամասնության վրոշումից դժգոհ մի քանի անգամի բարձրացրած աղմուկը մասմուկի նյութ գարձագի: Բայց ժյուրիի անդամներից Թաղեկոսյանի կողմն եյին բոլոր առաջավոր և նեղինակավոր գեղարվեստագետները՝ Սերովը, Ռուտոռուխովը, Պոլենովը, Լեվիտանը, Կորովինը: Դժբախտաբար մի քիչ դժվար ե այդ յերկու նկարների մասին դատելը, վորովհետև «Կեսօրյա ճաշ»-ի բնագիրը շուտով հրցեհի ճարակ դարձավ իսկ «Արևելյան նոկտյուրն»-ը հայտնի չե, թե վորտեղ և գտնվում: Ցուցահանդեսում կան դրանց, ավելի ուշ ժամանակի, փոքրացրած և եսքիզային կրկնությունները, վոր նկարիչը հիշողությամբ՝ կատարել է 1924—25 թ. թ.:

Թաղեկոսյանի իբրև մեծ հույսեր տվող նկարչի մասին արդեն համարում եր ստեղծվել վոչ միայն Մոսկվայի գեղարվեստագետների միջավայրում, այլ և նույնիսկ ինտելիգենցիայի ավելի լայն շրջաններում: Անդրեյ Բելին իր „Հա րբեյ դեստում“ գրքի մեջ գրում ե, թե ինչպես ինքը 90-ական թվականներին ցուցահանդեսներ եր տանում իր մորը, «աննկատելի ձնշումով նրան գարձնում եր Լեվիտանի, Նեստերովի, Թաղեկոսյանի, Կորովինի կողմը»: Յերբ Թաղեկոսյանի բարեկամներից մեկը նրան ուղարկել եր այդ տողերի քաղվածքը, վերջինս վշտով պատասխանել եր, վոր ինքը «տերեկի պես պոկվել ե մեծ ծա-

ոից»: Թագեվոսյանի հետեւյալ խոշոր աշխատությունը, Մոսկվայի այդ շրջանին վերաբերող, «Կույր հավատ» նկարն եւ Ինչպես մրցանակի արժանացած հիշյալ յերկու նկարի, նույնպես և վերջինիս սյուժեն ել նկարից դիտել եւ Հայաստանում յեղած ժամանակ: Բայտ մտահղացման նկարը շատ պարզ ե: Չափազանց արտահայտիչ ե խաչքարի կողմը կռացած և կոնսակով գրեթե դիտողին դարձած ծերունու ֆիգուրան, մանավանդ նրա ծերունական ձեռքը և ծոճրակը: Ակամայից հիշում ես Ռեմբրանդտի «Անառակ վորդին», վորտեղ նման դիրք ե ոգտագործված:

1889 թվականին Թագեվոսյանը վ. Դ. Պոլենովի հետ միասին իր առաջին ճանապարհորդությունն ե կատարում գեղի Արևելք՝ Պաղեստին: Այդ ճանապարհորդության արդյունքը յեղավ ետյուդների մի սերիա այն վայրերից, վորտեղ յեղել ե նկարիչը. սակայն դրանք, լինելով բարեխղճորեն ուսումնասիրված, նկարչականի կողմից հետ են նկարչի հետագա ետյուդներից: Մի տարի հետո Թագեվոսյանը կատարում ե իր յերկրորդ արտասահմանյան ճանապարհորդությունը, այս անգամ արդեն Փարիզ՝ համաշխարհային ցուցահանդեսը: Այդ ժամանակից սկսած և մինչև համաշխարհային պատերազմը գեղի Յեվրոպա կատարվող ճանապարհորդությունները գտնում են զրեթե ամենամյա: Փարիզը, ամենից առաջ լոււգըն իր համաշխարհային հավաքածույով, Թագեվոսյանին գեղարվեստական բազմաթիվ տպավորություններ ե տալիս: Այստեղ նա ծանոթանում է նաև ժամանակակից արևմտայելլուպական արվեստին: Բայց այդ ժամանակ արդեն ընդհանուրից ճանաչված ֆրանսիական

իմպրեսիոնիստները չեյին, վոր գեղարվեստագետին ամենից ավելի հետաքրքրողների թվում գտնվեցին: Դրանք եյին՝ նույնպացի Տոորոպը, շվեյցարացի Հոլեմը շվետ Ցորնը, իսկ Փրանսիացիներից՝ Բենարը, Բուտի գը Մոնվելը և Անրի Մարտենը: Մանեյի, Մոնեյի և իմպրեսիոնիզմի ուրիշ պարագլուխների ազգեցությունը զգացվեց ավելի ուշ, հետեւյալ ճանապարհորդությունների ժամանակի:

1901 թվականին Թագեվոսյանը թողնում է Մոսկվան և փոխադրվում Թբիլիսի, վորտեղ և վերջնականապես բնակություն ե հաստատում: Այդ փոխադրությունը կատարվեց անձնական բնույթի պատճառերով: Մի շարք միջնակարգ դպրոցներում նրա հանձն առած մանկավարժական աշխատանքը նրանից շատ ժամանակ եր խլում և հսարավորություն չեր տալիս գեղարվեստական աշխատանք կատարել: Միակ ժամանակական վոր նկարիչը կարողանում եր ամբողջությամբ ոգտագործել ամառային արձակուրդներն եյին, վորոնք սովորաբար անց եյին կացվում Յեվրոպա ճանապարհորդելով: Այդ ուղեվորությունները Թագեվոսյանին առատ նյութ եյին տալիս ետյուդային գործերի համար: Մանավանդ ծովային ճանապարհորդությունների ժամանակ նկարիչը շոգենավից նկարում եր ամենից ավելի ուշագրավ բոլոր տեսարանները: Իրեկ արդյունք ստեղծվեց ետյուդների մի կոլեցիա, վորը քիչ բացառություններով, ներկայացված ե այս ցուցահանդեսում: Այդ պեյզաժներում, վորոնցից բաղկացած ե Թագեվոսյանի ետյուդների ճնշող մեծամասնությունը, արդեն 1903—4 թվականներից սկսած և ավելի ուշ լիուլի ծաղկում ե նրա նկարչական մեծ շը-

Նորքը: Դրանցում Թագեռոյանը հանդես է գալիս վորպես պլեների փայլուն ներկայացուցիչներից մեկը և զբանով կաղվում է իմպրեսիոնիզմի հետ:

Բայց Թագեռոյանին հազիվ թե կարելի յել լիովին իմպրեսիոնիստ համարել Նույնիսկ յեթե վերցնենք նրա ետյուդները, վորոնցով նա ամենից ավելի յել հաշրում այդ հոսանքին, ապա այստեղ ել կարելի յել եյական տարբերություն տեսնել: Իմպրեսիոնիզմը տեսանելի ամեն բան անց եր կացնում սուբյեկտիվ զգացումների պրիզմայով, այսինչ Թագեռոյանի հետագա ետյուդների ճնշող մեծամասնության հիմքը կաղմում են որյեկտիվ ըմբռնումները: Ուեալ շոշափելի, և վոչ թե յեթերի թրթումների մեջ լուծված բնությունն է մեզ ներկայանում նրա պեյզաժներում: Նա կարողանում է հաղորդել թե Սիրիայի, Պաղեստինի տոթակենոց, կոնտրաստային բնությունը և թե իրեն հարազատ Հայաստանին, Վենետիկի ջրանցքների խոնավ, գոլորշիացումներով հագեցած անկյունները, Բըետանի լերկ ժայռերն ու ավազները, Ռուսաստանի կենտրոնական շըրջանի գաշտերի լայն տարածությունները, արևային վրաստանը: Բայց Թագեռոյանին առանձնապիս հաջողվում եր, և նա, թերես, ամենից ավելի սիրում եր պատկերել գարունը, փթթող բնության լիրիկական քնքշությունը: Մի շարք տարիների ընթացքում նա վերադառնում է ծաղկող պտղատու ծառերի միջտ միշտույն գարնանային մոտիվներին: Թագեռոյանի պեյզաժների մեջ նշանակալի տեղ են գրավում ծովային, ծովափնյա մոտիվները:

Բնության անվերջ բազմազանությունը, նրա բազմագիմությունը հաղորդելու շնորհքն ել հենց եազ-


մում և Թագեռոյանի՝ իբրև պեյզաժիստի՝ արժեքավոր հատկություններից մեկը:

Նրա աշխատությունների մեջ կա տասից ավելի Արարատի պատկեր, բայց նրանցից վոչ մեկը չել կը կընվում: Գեղարվեստագետը յուրաքանչյուր անգամ ինչ-վոր նոր բան է գտնում, Արարատի պատկերմանը մոտենում է մի ուրիշ կողմից:

Նուրբ ճաշակը, իսկական արտիստականությունն են հատուկ նրա այդ ետյուդներից յուրաքանչյուրին, վորոնք չափերով գրեթե մինիյատուր են և միաժամանակ գեղարվեստի լիարժեք յերկ:

Մնացած բոլորի մեջ առանձնակի տեղ են գրավում յերեք ետյուդ: Դա Մագրիդի Պրադոյում գտնվող Վելասկեզի «Զուլիակունիերի» ու «Las meninas»-ի և Տիցիանի «Վեներա» նշանավոր նկարների փոքրացրած պատճեններն են: Այստեղ պատճենն ըառը իրականությանը համապատասխանում է վոչ բոլորովին, քանի վոր համաշխարհային արվեստի այդ գործի գործոցների նկարչական կողմը հաղորդելուն մոտենալու համար Թագեռոյանին, բնագրերի և պատճենների միջև գոյություն ունեցող չափերի ահազին տարբերության պայմաններում, պետք է լինում գեղարվեստական այլ յեղանակներով հասնել տպագրության նույնությանը: Հստ եյության դրանք նույնպիսի ետյուդներ են, ինչ-պես լինում են բնականից կատարված ետյուդները:

Բացի Թբիլիսիի ժամանակաշրջանում՝ 1901 թը վականից մինչև Վրաստանի խորհրդայնացումը՝ նկարչի ունեցած ետյուդային գործերից, Թագեռոյանը քիչ բան և արել: Մի քանի նկար, մի շարք եսքիդներ և չափարաված գործեր—այս և յերկու տասնամյակի,



նկարչի հասունության և ուժերի ծաղկման տարիների հանրագումարը, վորոնք ընականաբար պետք է լինելին անպայման ավելի արդյունավոր:

Այդ նույն տարիներին բեկում ե կատարվում նրա մեջ նկարների գաղափարական արտահայտության տեսակետից: Նկարներ են նկատվում, վորոնց բովանդակությունը հեռանում է ունալ կյանքից և տանում գեղի յերազների, յերեակայությունների վոչ ունալ աշխարհը: Գեղարվեստագետի՝ այդ տրամադրությունների համար շատ ցուցանշական ե նրա «Յերազներից մեկը» նկարը, վորտեղ պեյզաժի ֆոնի վրա գտնվում ե անորոշ փանտաստիկ ճարտարապետության մի շնչք, գեղի վորը տանում ե մի շավիդ. նստած ֆիգուրը չի կենդանացնում այդ տարրինակ, վոչ ունալ պեյզաժը, վորտեղ ամեն ինչ ասես սուրված ե յերազի մեջ: Մի այլ նկար՝ «Հանճարը և ամրոխը» ել ավելի բնորոշ ե նկարչի տրամադրությունների համար: Այդ նկարի հիմքը կազմում ե հանճարեղ անձնավորությունը շրջապատի միջավայրին հակադրելու պարզ արտահայտման գաղափարը: Վերջինս չի հասկանում և ծաղրում ե «իր» հերոսին: Աչքի ընկնող անձնավորության իր միջավայրի կողմից մերժված լինելու այդ գաղափարը մեր ժամանակներում և մեր յերկրում, ինարկե, անհասկանալի և պարզապես անհնարին կլիներ: Բայց այն հանգամանքը, վոր այդ գիրքավորումն ստեղծվում ե մինչհեղափոխական ժամանակներում՝ մի նկարչի մոտ (նկարը վերաբերվում է 1909 թվականին այն ե՝ ունակցիայի տարիներին), վոր ապրում ե կապիտալիստական հասարակության մեջ, արվեստը չհասկացող և նրան խորթ շրջապատում, մեղ համար բացահայտում են

նրա վերաբերմունքը դեպի այդ հասարակությունը Առանձնապես համարձակ կռահում չի լինի այն յենթադրությունը, թե անձնապես ապրած շատ հիասթափություններ են գեղարվեստագետին դրդել նկարելու: այդ նկարը, վորտեղ հերոսը փախչում է ամբոխից ծաղրված: Ըստ եյության այդ նույն գաղափարն ե արտահայտված նաև կերպոնտովի մոտ նրա հայտնի «Մարգարե» վոտանավորի մեջ՝ «Գլխիս մոխիր եմ ցաներ»:

Նկարիչը թեման մեկնարանում եր ճշտորոշ դարաշրջանից դուրս: Նրա «ամբոխը» զանազան դարաշրջանների զգեստներ ե հազած, սկսած ունեսանսից, իսկ Բեթհովենի դիմագծերով պատկերված «հերոսը» հունական պարեգոստ ունի հագին:

Այս հոդվածում հսարավոր չի նկարչի այն բոլոր գործերի վրա կանգ առնել, վորոնք այսպես թե այնպես վկայում են իրենց մեջ «արվեստն արվեստի համար» իդեոլոգիան տիրապետելու մասին: Մատնամշենք, վոր այդպիսիների թվին են պատկանում հետեւյալ նըկարները. «Սոնետ» յերկու վարիանտով, «Անտիկ տեսիլքը», «Ֆիդիս» և «Զեվս» (վոչնչացել ե), մի շաբաթ եսքիզներ և անավարտ աշխատություններ—«Ծաղիկների սիմֆոնիան», «Թռչունների համերգը» և ուրիշները: Հատկանշական են այդ նկարների հենց անունները: Զափականացական ան այդ նկարների հենց անունները: Զափականց ուշագրավ ե նաև գեղարվեստագետի մի փոքրիկ ալբոմը, վորի մեջ նա նկարում է իր յերազները: Այդ ալբոմում կա քսան «յերազ», վորոնք բացառապես ֆանտաստիկ պեյզաժներ են: Թաղեռույնը, վերջապես, ունի այնպիսի գործեր, վորտեղ թեմաները թեպետ կարծես թե կյանքից են առնված,

բայց մեկնաբանությունն ինքը դրանց այլ բնույթ ետալիս: Այդպես ե «Զան-Դյուլում» գեկորատիվ պանանոն: Այստեղ ժողովրդական տոնի՝ ծաղկահավաքի ժանրային թեման առնված ե վոչ թե վորպես ոեալ և նկարչին ժամանակակից սյուժե, այլ հեռացված ե դեպի հեռավոր անցյալը, դարերի խորքը: Նկարը կատարված ե մեծ տրամադրությամբ, բայց ըմբռնվում ե վոչ իբրև ոեալ բան, և վոչ ել իբրև կենցաղային ժանր, այլ իբրև անցյալի խաբուսիկ տեսիլ վորտեղ դժույն տոններով, ասես թե զորելինի նմանեցրած պեյզաժի փոնի վրա, պատկերված ե հայ աղջիկների մի խումբ միջնադարի զգեստներով:

Բայց Թագեկույանի աշխատությունների մեջ հանդիպում ենք մի քանի նկարի, վորոնք հիմք են տալիս ընդունելու, վոր գեղարվեստագետն առմիջան չեր հեռացել «տեսիլների և յերազների» աշխարհը և վոր նա յերեխն վերադառնում ե կամ անմիշականորեն իրեն հարազատ կյանքից վերցրած սյուժեներին՝ «Մեր փողոցը Վաղարշապատում», կամ այդ կյանքի հետ այս կամ այն չափով կապված սյուժեներին՝ «Հովվերգություն», «Հովվիվ հոտի հետ»: Վերջին յերկու նկարը նկարված են լիրիկական մեծ զգացյական նկարված հաջող և վերջինը, վորմունքով, բայց առանձնապես հաջող և վերջինը, վորտեղ որգանակես այնքան ամբողջականորեն կապված են իրար հովվի ֆիգուրը հոտի հետ և տրամադրությամբ լի յերեկոյան պեյզաժը: Նկարիչն իր մոտ յեթյամբ լի յերեկոյան պեյզաժը: Նկարիչն իր մոտ յեթյամբ ետյուդներից յերբեմն նկարներ եր նկարում: Դրանք են «Բեյրութի ափերի մոտ», «Շոգենավին սպասելիս», «Լողը Ալգետկա գետում» և մի շաբք ուշը իշխները: Այսուամենայնիվ ըմբռնման անմիջականու-

թյամբ և թարմությամբ վերջիններս հետ են մնում հայուղներից:

Թագեկույանի ամենակապիտալ աշխատություններից մեկն ե «Քրիստոսը և փարիսեցինները» նկարը, վորը սկսված եր դեռ 1919 թ.: Նկարիչը նրա վրա աշխատել է մի քանի տարի, կան նրա մի քանի վարիանտները, կան շատ եսքիգներ, և Թագեկույանը, այնուամենայնիվ, այդ նկարներն ավարտված չեր համարում: Այդ նկարը Ոնանի «Հիսուսի կյանքը» գրքի ներշնչածն ե: Նրա ավետարանական սյուժեն միայն առիթ ե «Հանճարը և ամբոխը» թեմայի զարգացումը շարունակելու: Այստեղ հերոսն արդեն չի փախչում ամբոխից ծաղրված, այլ ընդիմագրում ե նրան: Բայց նկարը գեղարվեստական կողմից խիստ տարբերվում ե առաջինից: Նկարիչը ձգտել ե, վորքան կարելի յե, ոեալ կերպով պատկերելու այն, ուստի և վերցված են Արևելքի համար ընորոշ տիպեր և պեյզաժ: Այստեղ Թագեկույանին մեծապես ոգնել ե վայրը ճանաչելը, վորովհետև նա յերկու անգամ յեղել ե Սիրիայում և Պաղեստինում: Բացի արդեն հիշված առաջին ճանապարհորդությունից, Թագեկույանը յերկրորդ անգամ Պաղեստին ե գնացել 1911 թ.: Նկարի կոմպոզիցիան չափազանց կոմպակտ ե, բոլոր Փիգուրաները խիտ են և լցնում են գրեթե ամբողջ նկարը, միայն աջ մասի վերևում տրված ե արևելյան տոթակեղ պեյզաժի մի կտոր: Շատ արտահայտիչ են դեմքերը, մանավանդ փարիսեցինները: Քրիստոսը տրված ե վոչ թե սովորական «քրիստոնեական» մեկնաբանությամբ, այլ զայրացից, ցաւկու:

Թրիլիսիում Թագեկույանը մասնակցում ե «Ի-

կար» գրական—գեղարվեստական ընկերությանը: Ինտելիգենտների մի փոքրիկ խմբի կազմակերպած այդ գերազանցապես հստեսների խմբակը, մի քանի տարի գոյություն ունեցավ, դա մողեռնիստական ու սիմվոլիստական հոսանքների արձագանք եր, վոր վորոշչափով համապատասխանում եր նկարչի այն ժամանակա տրամադրություններին, և միաժամանակ «ուգանցք» եր նրա համար՝ արվեստից հեռու և նրան խորթ միջավայրի ընդհանուր ֆոնի վրա: Խմբակի պատվերով Թագերվոսյանը գեկորացիաներ նկարեց «Անտիգոնեյի» ներկայացման համար: Այսուղի մտերմական մի շրջանում նա ցուցադրեց իր ետյուդները:

Թբիլիսի փոխագրվելով, Մուսկվայի գեղարվեստական շրջանների հետ կապը գրեթե կտրվեց: Համարյաքանամյա մի ժամանակաշրջանում Թագերվոսյանը միայն յերբեմնակի, մի քանի տարին մեկ անգամ հաճագես եր գալիս «Ռուս Նկարիչների Միության» և „Միքս արտ“ ցուցահանդեսներում, տալով մեկական նկար:

Հայաստանում և Վրաստանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո Թագերվոսյանը յերկու հանրապետություններումն ել ակտիվորեն մասնակցում և գեղարվեստական կարգի զանազան հասարակական ձեռնարկումներին: Նա առաջ ել հեռու չեր հասարակական—գեղարվեստական գործունեյությունից, այսպես, 1915 թ. Թագերվոսյանը Թբիլիսիում «Հայ Գեղարվեստագետների Ընկերության» կազմակերպիչն ու նախագահն ե: Հեղափոխությունից հետո Թագերվոսյանը Թբիլիսիում նոր կազմակերպված՝ Վրաստանի Արվեստիայի պրոֆեսորն և, աշ-

խատում և Թբիլիսիում «Հայարտուն»-ի գեղարվեստական սեկցիայում, մասնակցում և Յերեվանում գեղարվեստական ստուդիա ստեղծելուն, իր գործերով հանդես և գալիս հայ կերպարվեստագետների Յերեվանում կադմակերպված թե՛ առաջին ցուցահանդեսում և թե՛ հետագան ցուցահանդեսներում: 1935 թ. Հայկական ԽՍՀ կոկ նրան շնորհում ե վաստակավոր նկարչի կոչում:

Ինչ վերաբերում ե հատկապես հեղափոխությանը հաջորդած տարիների գեղարվեստական գործունեյությանը, ապա բացի առաջ սկսած մի քանի նկարների վրա աշխատելուց, Թագերվոսյանն այդ տարիներին նկարում ե մի շարք պորտրեներ: Նկարիչը մինչ հեղափոխության տարիները պորտրեյտ համեմատաբար քիչ եր զբաղվում, թեպետ և իր նկարչական գործունեյության հենց սկզբում, ինչպես նշել ենք, նկարել եր Ռ. Մ. Սուրենյանի հիմնալի պորտրեն: Այժմ գեղարվեստագետը նկարում է «Ավտոպորտրետ», վորտեղ ձգտում ե վոչ միայն նմանությունը հաղորդել այլեվ զուտ նկարչական խնդիրներ և դնում կորոիդ, լուսավորություն: Նա նկարում է գրող Շիրվանզադեյի, բանաստեղծ Զակոր Հակոբյանի պորտրեները: Բայց պորտրեների այդ սերիայից ամենանշանավորը Հովհաննես Թումանյանի պորտրեն է: Վերջինս կատարված ե բանաստեղծի մահից հետո: Նկարիչը գրա վրա շատ և աշխատել արել և մի շարք նախապատրաստական եսքիներ: Այսուղի գրվող խնդիրն եր՝ վոչ միայն պորտրետաց, այլ ամենից առաջ հայտաբերել բանաստեղծի կերպարը: Թումանյանը պատկերված է իշլեն հարազատ կոռու պեյզաժի ֆոնի վրա, այն վայրերի, վորոնք կապված են նրա սպոեմբերի շատ հերոս-

ների հետո: Բանաստեղծի գեմքը տեղ—տեղ լուսավորված և արեվի շողերով, վողեվորված ե:

Վերջին պորտեները, վորոնց վրա գեղարվեստագետն աշխատում եր և վորոնք այնպես ել անավարտ մնացին, «Ընտանեկան պորտեն» եւ և «Կոմպոզիտոր Կոմիտասի պորտեն»: Առաջինը նկարիչը վաղուց եր մկնել բայց թողել եր անավարտ: Ըստ մտահղացման դա հետաքրքրական ե, նկարիչը բացի իրենից և կնոջից, վորոնք կենտրոնական տեղ են գրավում, վերարտադրում ե նայել իր ընտանիքի մնացած անդամներին իրենց մանկական տարիների միջավայրում: Թաղեղոսյանը դրան վերադարձավ կյանքի վերջին տարիներին, այդ պորտեն նկարչորեն բոլորովին դեռ ավարտված չե: Ավելի մշակված ե «Կոմիտասի պորտեն»: Այսուղ նույն ինդիրն եր դրվում, ինչ թուժանյանի պորտերյում, այն ե տալ կոմպոզիտորին ստեղծագործական մոմենտում: Այդ պորտերյի համար նկարիչն ոգտագործել ե Կոմիտասից արած այն ետյուղը, վոր կատարվել եր գեռ 1903 թ. Բյուրականում, վորտեղ Կոմիտասը կանգնած ե ամբողջ հասակով, ծառին հենված: Այդ պորտերյում Թաղեղոսյանը Կոմիտասին պատկերել ե մերդիք գրանցելիս, մինչդեռ հետին պլանում, պեյզաժի ֆոնի վրա տրված ե յերգող ուղարող գյուղացիների մի խումբ:

Հետհեղափոխության տարիներին Թաղեղոսյանը սովորական վարպետությամբ կատարել ե բավական շատ ետյուղային գործեր, պեյզաժներ—Հայաստանից (Սեվան, Վաղարշապատ և ուր.), Վրաստանից (Թբիլիսիի շրջակայքը) ե, վերջապես, Ղրիմից: Վերջիններս առաջին անգամ են ցուցադրվում, վորովհետեւ նկարված են մահից միքանի ամիս առաջ միայն:

Թաղեղոսյանի վերջին գործերից մեկը և միաժամանակ նրա առաջին գործը, վոր արձագանգում և մեր իրականությունը, մի նկարի եսքիդ ե ընկեր Ստալինի հայտնի խոսքերի բովանդակությամբ՝

«Ուրիշի վոչ մի թիզ հողը չենք ուզում: Բայց մեր հողն եւ մեր հողից վոչ մի վերջոկ վոչ վոքի չենք տա»:

Ինչքան ել վոր եսքեցային նկարվածը ունեն առաջի պլանի յերկու կարմիր բանակային ֆիգուրները և մանավանդ նրանց հետեւում կանգնած մասսան, գեղարվեստագետին հաջողվել ե արտահայտել նկարի հիմնական գաղափարը—լայն մասսաների անգրդվելի կամքը պաշտպանել Հոկտեմբերյան Սոցիալիստական Մ'եծ հեղափոխության մեծ նվաճումները: Թաղեղոսյանի մահը ննարավորություն չտվեց վոչ եսքիզը նկար դարձնելու, վոչ ել նոր նկարներ ստեղծելու, վորոնք ներդաշնակեյին մեր գարաշը ջանին: Թաղեղոսյանի այդ գործը մնաց միակը նրա ստեղծագործության մեջ, բայց դա մեզ միաժամանակ իրավունք ե տալիս ընդունելու, վոր Թաղեղոսյանը վոչ միայն մինչշնեղափոխական ժամանակի, այլ նա նույնպես մեր խորհրդացին եղալիսայի նկարիչն ե:

Նշել նկարչի արվեստի հիմնական գծերը, տալ նրա կյանքի ուղու կարեվորագույն մոմենտները, —այս ե ներկա ակնարկի նպատակը, վորն, ի հարկե, վոչ Յե: Թաղեղոսյանի մեծ ու բարդ արվեստի սպառիչ բնութագիրը տալու և վոչ ել նրա կենսագրության մանրամասն շարադրանքը լինելու հավակնությունն ունի: Վերջինս ապագայի գործ ե, Թաղեղոսյանի մասին մի հատուկ մենագրական հետազոտության գործ:

Ռ. ԴՐԱՄԲՅԱՆ

4 U S U L 0 4

Գ Ե Պ Ա Ն Կ Ո Ւ Զ Ո Ւ Ի Ն

Նկարներ յեվ եսթիզներ

1891 թ.

1. Ռ. Մ. Սուրենիանի պատրևն.

Կտ. 98×58,5. Սեփ. Ա. Հ. Սուրենյանի, Մոսկվա:

1896 թ.

2. Իմ լեռազներից.

Եսքիզ, կ. տեմպ., 34×53.— Հ. կ. Պ. Թ., Յերեւանի վան:

1897 թ.

3. Առակ հարուստ յեվ տպան Ղազարանի մասին.

Թ. տեմպ. 37,5×58. աջ կողմում, ցածում, ստորագրություն. Ե. Տատևօսյան, —97. Վ. Պոլենովի անվան թանգարան, Պոլենովիա:

4. Նույնը.

Եսքիզ, թ. տեմպ. 10,5×25

5. Մամի հայտնումը.

Եսքիզ, թ. տեմպ. 10,5×25:

1898 թ.

6. Բակր բյուրականում.

Ետյուդից, կտ. 90,5×35,5. աջ կողմում, ցածում, ստորագրություն. Ե. Տատևօսյան, —98. Վ. Պոլենովի անվան թանգարան, Պոլենովիա:

90-ական թվականներ

7. Ինֆուսնիստ.

Թ. ջրան., 17×10,5. աջ կողմում, ցածում, E. Tatevosianz, Վ. Պոլենովի անվան թանգարան, Պոլենովիա:

8. «Յերազներ», ալբոմի թերթիկ.

Թ. ջրան. 10,5×8,5:

9. Ալբոմ ունամենսներով.

Թ. ջրան. 12×16:

1900 թ.

10. Պար.

Եսքիզ, թ. տեմպ, 31×23,5:

1901 թ.

11. Կույր հավաս.

Կտ. 98×59. ձախ կողմում, ցածում, ստորագրություն. E. Tatevosianz, 1901:

12. Սփոփիանք. անժիկ կյանից.

Կտ. 34,5×20. ձախ կողմում, ցածում, ստորագրություն. E. Tatevosianz, 1901:

13. Նույնը.

Գարիանտ, փ. 23×12,5:

1902 թ.

14. Պուլյու գետի սկիզբ. բրեսան.

Կտ. 37×61. աջ կողմում, ցածում, ստորագրություն. E. Tatevosianz. Վրաստանի ԽՍՀ Արվեստի Պետ. թանգարան «Մեթեխի», Թբիլիսի:

1903 թ.

15. Նկարչի կնոջ պարտեն.

Կտ. 87×139. ձախ կողմում, ցածում, ստորագրություն. E. Tatevosianz, 1903.—Հ. Կ. Պ. Թ., Յերևան:

16. Պուլյու. բրեսան.

Ետյուղից, կտ. 27×40. աջ կողմում, ցածում, ստորագրություն. E. Tatevosianz, 1903:

1905 թ.

17. Արարար Բյուրականից.

Ետյուղից, կտ. 97×57. աջ կողմում, ցածում, ստորագրություն. E. Tatevosianz. սեփ. Փ. Մանղենովի, Թբիլիսի:

18. Ս. Ճեղինելի ժամատնակի ներդին տեսարանը. Յերասաղեն:

Ետյուղից, կտ. 53×35. աջ կողմում, ցածում, ստորագրություն. E. Tatevosianz, 1905.—Վ. Պոլենովի անվան թանգարան, Պոլենովիա:

19. Նկարչի կնոջ պարտեն.

Կտ. 51×66. աջ կողմում, ցածում, ստորագրություն. E. Tatevosianz, 1905.—Վ. Պոլենովի անվան թանգարան, Պոլենովիա:

20. Իմ յերազներից.

Կտ. 97×142. ձախ կողմում, ցածում, ստորագրություն. E. Tatevosianz, 1905.—Հ. Կ. Պ. Թ., Յերևան:

1907 թ.

21. Զան—գյուլում. ժաղավրդական տան. ծաղկաբաղ.

Դեկորատիվ պանոն. կտ. 274×200.—Հ. Կ. Պ. Թ., Յերևան:

22. Նույնիլ.

Եսքիզ, թ. գուաշ. 27×24. աջ կողմում, ցածռմ, ստորագրություն. E. Tatevossianz, 1907:

1908 թ.

23. Ֆիլիսա լեվ Զեվս.

Եսքիզ, կ. տեմպ. 16×25:

24. Դեկորացիայի եսֆիզ Ռեֆիլովի «Տոնածառ» ոպերայի համար.

Թ. գուաշ, 13,5×26,7:

1909 թ.

25. Հանճարը լեվ ամբոխը.

Կտ. 152×149. աջ կողմում, ցածռմ, ստորագրություն. E. Tatevossianz, 1909.—Հ. կ. Պ. թ., Յերևան:

26. Նույնիլ.

Եսքիզ, կտ. 31×27,5:

27. Սոնեց.

Կտ. 34×49:

28. Նույնիլ.

Կտ. 64×90. աջ կողմում, ցածռմ, ստորագրություն. E. Tatevossianz, 1909:

1900-ական թվականներ

29. Վարագույրի եսֆիզ.

Թ. տեմպ, 21×15:

30. Դանիելը առյուծի գուրում.

Կտ. 36×13,5:

1910 թ.

31. Vox pacis. չափարաված.

Կտ. 93,5×214:

32. Նույնիլ.

Եսքիզ, կ. գուաշ. 11×25,5:

1912 թ.

33. Թոշունների համերգը:

Եսքիզ, կտ. 20,5×18:

34. Ծաղիկների սիմֆոնիա.

Եսքիզ, թ. գուաշ, 24×14,5:

35. Ապան-աղա. ժաղավրդական լեզենդա.

Գունավորված գիպս, 74×74. աջ կողմում, ցածռմ, միացագիր. Ե. Թ.—Հ. կ. Պ. թ., Յերևան:

36. Նույնիլ.

Եսքիզ, թ. տեմպ. 23×23,5:

1913 թ.

37. Լուսնյակ զիւեր Բեյրութի ափերին.

Ետյուզից, կտ. 72×90.—Տրեայակովսկայայա գալերեյա, Մոսկվա:

38. Նոգենավին սպասելիս. նավահանգիստը Պուր-Սալիլում.

Ետյուզից, կտ. 49×85.—Հ. կ. Պ. թ., Յերևան:

1914 թ.

39. Արարատ.

Ետյուզից, կտ. 38×68. —Ճախ կողմում, ցածռմ, ստորագրություն. E. Tatevossianz, 1914. Լենինականի թանգարան:

40. Ուսական յել Արտագած.

Ետյուղից, կտ. 49×69. աջ կողմում, ցածռմ, ստորագրություն. Յեղիշե Թաղեվոսյանց.—Հ. Կ. Թ., Յերևան:

1915 թ.

41. Թռչունների համերգը. չափարժված.
կտ. 107×75:

42. Մադիկների սխմֆոնիա. չափարժված.
կտ. 107×75:

43. Ոկա գետի մոս.

Ետյուղից, կտ. 51×72. ձախ կողմում, ցածռմ, ստորագրություն. E. Tatevossianz, 1915.—սեփ. Պոլենովսերի, Մոսկա:

1916 թ.

44. Մադկած խնձորենի.

Ետյուղից, կտ. 42,5×35. աջ կողմում, ցածռմ, ստորագրություն. E. Tatevossianz, 1916.—սեփ. Փ. Մանդենովի, Թբիլիսի:

45. Նկարչի կտոր պատրեն.

կտ. 10,5×7,5:

46. Մայրաւրյուն:

կտ. (կլոր), 11,5. աջ կողմում, ցածռմ, ստորագրություն. Յել. Թաղեվոսյան, 1916:

1917 թ.

47. Բեյրութի նավահանգիստը:

Ետյուղից, կտ. 61×106. աջ կողմում, ցածռմ, ստորագրություն. E. Tatevossianz, 1917.—Լենինականի թանգարան:

48. Արագած.

Ետյուղից, կտ. 47×73. աջ կողմում, ցածռմ, ստորագրություն. Յեղիշե Թաղեվոսյան, 1917.—Լենինականի թանգարան:

49. Արագած.

Ետյուղից, կտ. 54×76. աջ կողմում, ցածռմ, ստորագրություն. Յեղիշե Թաղեվոսյան, 1917.—Հ. Կ. Թ., Յերևան:

50. Մայրաւրյուն.

Եսքիզ, կտ. 21×21,5:

1919 թ.

51. Հավիերգաւրյուն.

կտ. 66×92. ձախ կողմում, ցածռմ, ստորագրություն. Յեղիշե Թաղեվոսյան, 1919.—Պհտ. Ռուսական թանգարան, Լենինգրադ:

52. Հավիել հասի հաս:

կտ. 44×87. ձախ կողմում, ցածռմ, ստորագրություն. E. Tatevossianz, 1919.—Հ. Կ. Պ., Յերևան:

53. Քրիստոը յել փարխսեցիք. չափարժված.

կտ. 60×122,5.—Հ. Կ. Պ., Յ. Թ., Յերևան,

54—59. Նույնը.

Եսքիզներ, կտ. և կ. 18,5×36; 13,5×19; 10,5×21,5; 10×23,5; 10×8; 10,5×21,5:

60. Նույնը.

Եսքիզ, կտ. 15,5×30.—Վ. Պոլենովի անվան թանգարան, Պոլենովկա:

61. Քրիստոի զլուխը:

Եսքիզ, կտ. 24×19,5:

62. Ս. Ֆ. Շ.-ի պարտեն.

Կտ. 70×59. աջ կողմում, ցածում, ստորագրություն. E. Tatevossianz, 1919:

